

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԷԸ
Պաշտպան 10 ՄԷԸ
Վերականգնող Կ. Պոլսոյ 4 ՄԷԸ
Պաշտպան 3 ՄԷԸ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փոյ
Յանուարի ամիսը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար գաւառ սակարկութիւն կրկնայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գերմանիոյ կառավարութեան կողմէ Սպանիոյ նկատմամբ ցոյց տրուած բարեկամութեան ներքեւ ծածկուած գաղտնիքն երեւան ելնել կ'սկսի:

Ամերիկայի լրագիրք կը ծանուցանեն թէ Գերմանական կառավարութիւնն իր ծովային զօրութիւնն ընդարձակելու համար Ամերիկեան Ովկիանոսին մէջ նաւահանգիստ ունենալու պէտքն զգալով, Սպանիոյ կառավարութեան հետ բանակցութեան մտեր է՝ Սնիթիւն կըզգեաց Բորթօ—Րիքօ նաւահանգիստը գնելու համար: Եւ որովհետեւ այսպիսի առուուոր մը կրնար Սպանիոյ ժողովրդեան դուռը կ'օղակահարէր, որ ինքը մեծապաշտով փոխադրուած իւր մ'ըրած ըլլայ Սպանիոյ կառավարութեան, նա ալ Բորթօ—Րիքօի նաւահանգիստը գրաւ տայ իրեն: Եւ որովհետեւ Սպանիոյ կառավարութիւնը տոկոս վճարելու կարողութիւն չունի հիմա և անշուշտ երկար ժամանակ ալ չը պիտի կրնայ վճարել, Գերմանիոյ կառավարութիւնը բնականաբար Բորթօ—Րիքօի տէր պիտի ըլլայ:

Սյո տուրուածը մեծ դժուրութիւն յարուցած է Ամերիկայի մէջ, և թէպէտ Գերմանիոյ լրագիրք կը ժխտեն և սուտ հաներու կաշխատին, բայց դործին հաւանականութիւնը չեն կրնար ցրել:

«Սյո լուրին ստուգութեանը վերայ կասկածելու համոզիչ պատճառ մը չկայ, կրնէ միայնալ Նախագահ Սընթրաքիւրը Գերմանիոյ կողմէն ընկալնիոյ ստակ տրուելն և Պ. Պիամարքի ալ Սպանիոյ կառավարութիւնը ծանցելու համար իր բոլոր ազդեցութիւնը դործածելն անվիճելի իրողութիւններն են: Յայտնի է նաեւ թէ Գերմանիոյ կառավարութիւնն Սնիթիւն կըզգեաց մէջ նաւուց և ամառային կայարան մ'ունենալու կը փափաքի, որ իր ծովային զինուորական և առեւտրական բարդաւածման համար անհրաժեշտ է: Ուստի Բորթօ Րիքօ՝ բնական գինն է այն օժանդակութեան՝ զոր Պիամարք ընծայեց Սէրրանիօի:»

Ուրիշ լրագիրն ալ հետեւեալ խորհրդածութիւնը կրնէ.

«Սպանիական դաշմանականութեան երկիր մ'օտարի վաճառելն անհնար պանութեան դործ մ'է Սպանիայի անհատականութեան կամ կուսակ-

ցութեան մը կողմէ: Գերմանական կառավարութեան համար ալ մեծ անխոհեմութիւն է Միացեալ—Նահանգաց աշխարհավարութիւնն արհամարհել, և անհաշտելի հակադրակորդ մ'ըլլալ անոր: Ամերիկայի ժողովուրդը չկրնար թողուլ բնաւ ոչ Սնիթիւն կըզգեաց կամ Նոր աշխարհի որ և է մասին մէջ Եւրոպական որ և է դժոյշ մը ներքեւ նոր տեսակ դաշմանականութիւն մը հաստատուի: Իր այս որոշումը բազում անգամ հըրատարակած է կէս դարէ ՚ի վեր, և գրեթէ հաւատարմաւ դարձած է Ամերիկայի ժողովրդեան համար:

«Ոչ մի տէրութիւն չկրնար այս որոշման հակառակ վարուիլ՝ առանց Միացեալ—Նահանգաց մշտնջենաւոր թշնամութիւնը գրգռելու:»

Գաղղիոյ մէջ ազդային ժողովոյ պալատ անդամոյ թիւը լցնելու համար մասնաւոր ընտրութիւններն ըսկէսկու ժողովուրդը, ամեն կուսակցութիւնը ընտրելիներ կը պատրաստեն և մեծամասնութիւն փոփոխելու ճիշդ կը թափեն: Բայց յաղթութիւնն ընէ՝ ըստ ամենայն հաւանականութեան՝ Հանրապետականք պիտի վաստակին շատ տեղ, որովհետեւ Հանրապետականութեան գաղափարը մեծ յաւակութիւններ ըրած է Գաղղիոյ ժողովրդաց մէջ, այնպէս որ միայնաւ կան կուսակցութիւնը մինչև որ չը միանան, չեն կրնար յաղթելու հաւանականութեամբ միջիլ անոնց հետ: Բայց այս միտցումն ալ անհնար կ'երևի:

Պաղէնի փախստեան վրայ եղած ընդունութիւնը աւարտեցան: Լըվալ զօրապետին առ զինուորական նախարարն ուղղած տեղեկադիրը բնաւ տարակոյշ չթողուր, որ Պաղէնի փախստեան պարտքներուն վրայ առկէ տաւ հրատարակուած տեղեկութեանց ամենն ալ հասարակաց կարծիքը խաբարու և կասկածներն հեռացնելու համար կանխաւ նիւթ ուած առաջադէմներ էին:

Պաղէն մարտախոս՝ քաղաքային պաշտպանաց մեղադրութեան շնորհիւ նախ բանտին դռներն և ետքն ալ բերդին դոյզ դռներն դուրս ելած, և ծովեզերքն սպասող մակիկը նրա տեղով, որ Տիկին Պաղէնի վարձած մակիկը չէր, այլ Պարոն Րիքազօլի անուն շոգեհաւին մակիկն էր, յիշեալ շոգեհաւը դնացած է:

Սյո ամեն գործողութիւնները վիճելով դնդապետը պատրաստեց է՝ բանտին քաղաքային պաշտպաններուն մի քանին կաշառելով և բերդին գոյ դռները մտ սպասող զինուորն ալ հնարքով մ'իր պարտականութիւնն հեռացնելով: — Ինչ է եւ զեր հնարքը—կին մը, զոր պաշտպանեցին մին բանտը մացուցեր է: Լըվալ զօրապետին եզրակացու-

թիւնն է. Ս. Նիսիֆէրեանդատ աւանին առջև դատել վիճելով դնդապետը, որ Պաղէնի հետ խորհրդակցութեամբ փախուտի միջոցները նիւթած ու ըլլաւրաստած է՝ պաշտպաններ կաշառելով և զինուոր մ'իր պարտականութիւնէն խոտրեցնելով: Բ. բանտին տնօրէն Պ. Մարքի և ուրիշ մեղադիր պաշտպանները նոյնպէս դատաւարներն երթար: Գ. պարտադանց զօրականը պատեւազմական ատենի մ'առջև դատել:

Տրէզուարի մէջ այս օրերս դէպք մը պատահեցաւ որ ամենուն խօսակցութեան նիւթ եղած է:

Իրիկուն մը, ժամ չորսին միջոցները Տրէզուարէն—Լէյքլիկ երթալու երկաթուղային կայարանին ճաշատունը վայելագոյն երկտասարդ մը կը մտնէ երեք պարոններու հետ: Երկտասարդը՝ որ պարագլուղ ունեցող ռաւանդէ մը կ'ըլլար, սենքի, չոր կերպով դաւաթ մը գարեջուր կուղէ խմելու: Ետայ, առանց հոն գանդած պարագալ ամօռներուն միջին վերայ նստելու, կըցատի քաղցրաւենեաց սեղանին վրայ կը նստի՝ կրնալ նոյն սեղանին դուրը նստող օրիորդին դարձնելով, որով սպասաւորաց և օրիորդին դործոյն արգելք կըլլար: Ասոնք քաղաքավարութեամբ կաղաչեն երկտասարդին որ ամօռի մը վրայ նստի, բայց ի դուրս: Գարեջուրը բերող սպասաւորն ալ կաղաչէ. «Երբոր դաւաթ խմեմ, կերթեմ» կըզատաստանէ երկտասարդը:

Ճաշատան տէրն այս բանը լսելով կերթայ վերջին ատիճանի քաղաքավարութեամբ նոյն աղայանքը կրնէ երկտասարդին իսկ նա առանց ուրիշ պատասխան մը տալու՝ փառաւոր ապտակ մը կ'ընկնէ ճաշատան տիրոջն երեսին:

Ստոր վրայ բոլոր հոն գտնուողները՝ «Գուրս» ըրէք, «Գուրս» ըրէք դա չարք» կը պոսան և անմիջապէս վար կ'անուն նոտած սեղանին վերայէն, և գաւազանի ու հովանեակի հարուածներ տեղալով դիմուն, ճաշարանին դռներն դուրս կը նետեն:

Ո՞վ էր այդ երկտասարդը, որուն իր երեք ընկերները «բարձրապատիւ» անականը կուտային աղքատ ժամանակը: Վերջապէս կ'ըմացուի որ Օլտէնպուրիկ ժառանգ մեծ դուքան էր, որ Լէյքլիկ համալսարանին մէջ իրաւագիտութիւն կուսանէր: Հասարակութիւնն այն ատիճան դայրացած էր, որ եթէ ոտիկանութիւնը չհասնէր, բարձրապատիւն վիճակը շատ դէշ պիտի ըլլար:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 11 սեպտ.
Մար—Մահոն մարտախոսն այս ա-

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս դադած լրագրաց ճան ու ծախքը խմբագրութեան վրայ է: Լրագրոյ վերաբերեալ նամակ կ'ստոր եւ իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պոլսոյ, Չինիլի խան, Մաթիսի գրասենեակը: Համար ծախքը չվճարուած նոսանկ չընդունուիր:

Առաւօտ Սպանիոյ դեսպանն ընդունեց, որ իր դեսպանական վիպայրերը մատուց իրեն, և բարեկամական խօսքեր փոխանակեցան:

Յետոյ մարտախոս նախագահն Յուստանի դեսպան Պ. Բուտուրեթօլին ընդունեց:

Սյո իրիկուն մարտախոսը Փարիզէն պիտի մեկնէ հիւսիսային դաւառներն երթալու համար:

Հասարակաց կրթութեան նախարարը Թուրքիոյ դեսպան Ուլի փաշային «Հասարակաց կրթութեան պաշտօնակալ» և Վ. Բ. Սալիֆէ փաշային ալ Գաղղիոյ Ալազեմիայի պաշտօնակալութեան պատուանուն ընծայեց:

Պոլսէ 11 սեպտ.

Հունգարիոյ առեւտրական գործոց նախարար Պ. Ջիքի՝ Աւստրո—Հունգարական երկաթուղիները Բուխարէի երկաթուղեաց կցելու արուեստական սպասաններուն վրայ Բուխարէի կառավարութեան հետ բանակցելու համար հոս եւ կու:

Երեստ 11 սեպտ.

Թայմի լրագիրը կը ծանուցանէ թէ Գաղղիոյ Էմիլին իր ստանաւ լրաց ըստ պաշտօնաց Չինական զօրաց հարուած մը տուաւ:

Հունանական է որ Չինաստանի և Հաւանի մէջ ծագած վճն Ամերիկայի Միացեալ—Նահանգաց նախագահին կամ Խաղիկ թագաւորին իրաւարարութեամբ իրաւագրական լուծում մ'ատանայ:

Հարունէն դեսպան մը դնաց Բէքին:

Պոլսէ 12 սեպտ.

Կայսրը՝ որ զինուորական վարժութեանց փորձերու համար հոս եկած էր, մեկնեցաւ:

Մարտի 12 սեպտ.

Բալիս զօրապետը կատարելապէս յաղթեց Բարլոստեանց Մոյնիթրածօնի մօտ:

Փարիզ 12 սեպտ.

Մար—Մահոն մարտախոս Լիւ մոտ ժամանակ «Լեյքլիկ» հանրապետական Մար—Մահոն տրագիկներով ողջունեցաւ ժողովրդին:

Երկաթուղային կայարանը Պէճիացի զօրավար մը կ'սպասէր, որ Պէճիոյ Լէսուր թագաւորին կողմէն մարտախոսը բարեկու եկած էր:

Մարտախոս նախագահը դաւառաւ կան ժողովոյ նախագահին բանախօսութեան պատասխանելով ըսաւ. «Ազգային ժողովոյն ինձ յանձնած պաշտօնն անյուղող փոստակութեամբ պիտի կատարեմ» ամեն կուսակցութեանց չարաւոր մարդիկը դործակցութեան կոչելով:

Մար—Մահոն մարտախոսն Արաս, Պէճիկ, Ամիս և Սէն—Գառնիէ քաղաքները պիտի երթայ և ուրախութեամբ փարիզ վերադառնայ: Լիւս երթալու դիտարկութիւնն անսահմանաբար ետ ձգուած է:

Փարիզ 13 սեպտ.

Պ. Լիւիօ մեռաւ:

Մար—Մահոն մարտախոսը Պէճիկի քաղաքապետին պատասխանելով ըսաւ թէ կը յուսայ որ ազգային ժողովը շուտով կ'որոշէ սահմանադրական օրէնքները:

Մարտախոսին եղած ընդունելութիւնն իրաւ համակրական էր:

Նիւ Եօրք 12 սեպտ.
Երկրագործական դիւանը ներկայ
անպատճառ ամսոյն համար շինած տեղեկագր-
քին մէջ կրտսէ թէ բաժնեկի բերքը՝ երաշ-
տութեան պատճառաւ հարկերին 20 պա-
կաս է անցեալ ամսոյ տեղեկագրին վրայ:
Լոնտոն 12 սեպտ.
Փոխ. 44 11/16
Փոխ. 1865—
» 1869 56 9/16
» 1871 66 1/2
» 1872 83 3/8
Անգլ. փոխ. 92 11/16
Փոխ. նոր փոխառութիւն 53 3/8
Լիւնդրոն 12 սեպտ.
Բաժնեկի Միալիւն—Օրէշան 8 1/4—1/8
» Ֆայր Տօլէրա՝ 5 1/8—
Ճշգրտած 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Գոնեայի կուսակալ Բարձր. Լաստ
փաշան Սիրիոյ կուսակալ և Կայսերա-
կան հինգերորդ. զօրաբանակին հրա-
մատար անուանեցաւ:
Հինգերորդ. զօրաբանակին հրա-
մատար Եսպիէր փաշան երկրորդ. զօ-
րաբանակին հրամատար անուանեցաւ:
Երրորդ. կուսակալ և Երրորդ. զօ-
րաբանակին հրամատար Մուսթա-
ֆա փաշան Պետական խորհրդոյ ան-
դամ անուանեցաւ:
Երկրորդ. զօրաբանակին հրամա-
տար Ահմէտ Մուսթաֆա փաշան Էր-
զըրումի կուսակալ և Երրորդ. զօրա-
բանակին հրամատար անուանեցաւ:
Շրջափայլի կուսակալ Ահմէտ Բա-
սիմ փաշան Գոնեայի կուսակալ ան-
ւանեցաւ:

Վեհ. Սուլթանը Տօլմա Պահէճի
պալատին և Երզըրդի Գէօշիկին մօտե-
լից Էրզըրումի փաշան Էրզըրումի ու
Հէնքերը վերցնելու հրաման ընելով,
յիշեալ տուններն հետզհետէ կը պար-
պտեն ու կը քանդուին:
Նորին Կ. Վեհափառութիւնը նաեւ
Պրանկիրաց կանոնաւոր դունդ մը
կազմելու հրաման տուած ըլլալով,
կրտսէ թէ ղեկնորսական նախարա-
րութիւնն արդէն այս խնդրով զբա-
ղիլ սկսած է:

Կը յիշեն ընթերցողք թէ 1870ին,
Քերայի մեծ հրդեհէն ետեւ, դեռ
պահտատանց առաջարկութեամբ յանձ-
նած սղով մը կազմուած էր Սպարապե-
տի դուռը բնիկ և Եւրոպացի ղեկ-
նորականներէ բաղկացեալ որք Եւրո-
պական ամենակատարեալ զրութեանց
վրայ հիմնեալ ծրագիր մը պատրաս-
տած էին, բայց գործադրութիւն չէր
գտած:

Կը յուսացուի որ այն ծրագիրն
այս անգամ ընդունուելով գործադ-
րութեան պիտի դուրսի:

Գիտողութեան արժանի է սա-
կայն, թէ ջրանկիրաց կազմաւորեալ
գունդ մ'ունենալով միայն բաւական
չէ հրդեհները չուտով մարելու, այլ
հարկ է նաեւ ամեն թաղերու կամ
մանաւանդ ամեն փողոցներու մէջ
յատուկ ջրամարտներ ունենալ, որ-
պէս զի հրդեհ պատահած ժամանակ
առաջ ջուր մատակարարեն ջրհան-
ներուն, առանց որոյ ջրանկիրներն
որչայի և լաւ կազմաւորեալ ըլլան,
չեն կրնար մեծ գործ մը տեսնել, թէ
և կանոնաւոր ջրանկիրաց խումբեր
ունենալն ալ անթիւտելի պէտք մ'է:

Եւրոպայոյ շատ քաղաքացի փողոց-
ներուն մէջ յատուկ աղբիւրներ կան
որք հրդեհի ժամանակ կը բացուին,
և ժողովուրդն երկու կարգ չլիւծայ
կազմելով՝ մտաւայ պահականոցէն
բերուած հարկաւոր միմիկէ դուրս
լինի հետզհետէ աղբիւրէն կը լցնեն և

ձեռքէ ձեռք տալով ջրհանին քով կը
հասնեն, միւս կողմէն ալ պարապ դոյ-
լերը նոյնպէս ձեռքէ ձեռք տալով աղ-
բիւրին քով կը հասնեն, և այդպէս շա-
րունակ առաւ ջուր մատակարարեն
ջրհանաց, առանց աղմուկի և առանց
չփոթութեան:

Այս կարգաւորութիւններն ալ
անհրաժեշտ են հրդեհները չուտով
մարելու համար:

Միմիկէ գործոց նախարար Վը-
սեմ Ահմէտ փաշային Գափտան փա-
շայի տիտղոս տրուելուն լուրը տուա-
կը հանէ Լէվընթ Հէրըլա, և կը ծա-
նուցանէ թէ Նորին Վեհափառութիւնը
զրահաւոր նաւատորմին հրամատար
անուանած է միայն:

Կայսերական կառավարութիւնը
թէ միմիկէ քիմիկ վրայ օխային 30 զըշ
տուրք դնելով, թէ միմիկէ վաճառող
Պարտիկները խանութներն գոցեցին և
իրենց գեղարարներն բողոքեցին, Գեա-
պանն ալ Բ. Գրան բողոքեց, և մի-
անգամայն հեռագիր զարկաւ առ-
լուր կառավարութիւնն:

Անցեալ շաբթու վիճնոյն եկած
հեռագիր մը կրճանդանայէր թէ յիշ-
եալ քաղաքի թղթատարութեան
պաշտօնարանին մէջ 1600 յանձնա-
րարեալ նամակ գողցուեր է նոյն
պաշտօնարանին գործակալաց ոմանց
ձեռքը:

Վերջէն եկած հեռագիր մը կը
ծանուցանէ թէ այս լուրը սխալ է:
Գողցութիւնն ընողը ոչ թէ պաշտօնա-
րանին գործակալներն, այլ դուրսէն
գող մ'է, որ պաշտօնարանը մտնե-
լով յիշեալ 1600 նամակ վերուցեր է:

Կիրակի օրը Գարաքէօյի նաւա-
մատուցին առջև երկու թուրք նա-
ւավոր կրտսէ հետ վիճի բռնուելով
մին ցատկոյ միւսին նաւակը մտաւ
որպէս զի ծեծէ զայն, բայց ձախորդ
կերպիւ ցատկելուն, նաւակը տակնի
վրայ եղաւ և երկու կուռքներն ալ
ծովն ինկան: Այս անակնկալ բաղնի-
քն իսկայն պաշտօնաց անոնց ջերմ
զայրոյթը, և իրենց հողին վերկելու
միայն աշխատիլ սկսան, որովհետեւ
լուրը չգիտնալուն համար երկուքն
ալ պիտի խեղդուէին եթէ ուրիշ
նաւատարներ օգնութիւն չհասնէին:

Անցեալ շաբթու Գատըգէղ մէկ
գիշերուան մէջ երկու առն գող
մտան, Պ. Սթեֆանովիչի և Պ. Բէթէ-
րի տունները, և արձակեցին զոչ-
ցուեցան:

Օրթագիւղի մէջ ալ ուրբաթէն
շաբաթ լուսնաւոր գիշերը ֆիւրկէյի
առաջնորդ Պուլլար եպիսկոպոսին
տունը գող մտնելով 600 լիւրայի դը-
րամ և այլ թանկագին նիւթեր վե-
րուցին:

Գրքմի թաղի արեւելք վերջին ժա-
մանակներս նորէն թուրքիւ գաղ-
թել սկսած են՝ ղեկնորսութեան
ազատ ըլլալու համար, և Ռուսիոյ
կառավարութիւնն ալ կերելի թէ
մեծ փոյթ մը չունի զանոնք արդի-
ւելու, խորհելով թերեւ թէ այդ
մահմէտական ժողովուրդը չպիտի
կրնայ ռուսացնել:

Սակայն երկրագործական նկատ-
մամբ թաղարաց Գրքմէն մեկնելը
մեծ վնաս է երկրին: Սմենէն գեղե-
ցիկ և մշակեալ երկիրներն օր քան
զօր անապատ դառնալու վրայ են
կրտսէ Բեդրապուրիէն գրուած նամակ
մը, և այդեղործութիւնը որ Գր-
քմի գլխաւոր հարստութեան միջո-
ցն է, գրեթէ բոլորովին ջնջուելու

վտանգի մէջ է: Մեծ հողատէրերուն
վիճակն ալ շատ գէշ է, որովհետեւ
մշակ գետնին օր քան զօր անհնարին
կըլլայ:

Կառավարութիւնը Ռուսաստանի
խորհրդէն գեղացիներ բերել տալու
միջոցներ անօրինեց, բայց չյաջողե-
ցաւ: Ռուս գեղացիները Գրքմի մէջ
երկրագործութիւն ընելու յարմա-
րութիւն չունին. հարաւային Ռուսի-
ոյ իւրեքներն ալ, որք աւելի յար-
մարութիւն ունին երկրագործու-
թեան, իրենց արգաւանդ գաշտերը
Գրքմի ապառաժուտ բլրոց հետ չեն
փոխանակեր:

Վերջապէս Գրքմի երկրին վիճա-
կը քանի կերթայ կը վատթարի: Շատ
քաղաքացի արտերուն մէջ կանանց
մէ ու ծերունիներէ զատ մարդ չը
տեսնուիր, որովհետեւ երկրասարգ-
ները ղեկնորսչառնուելու համար ա-
մենէն առաջ երկիրը թողած փա-
խած են:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԵ	
2 սեպտ. երկուշաբթի իրիկուն	48,26
3 » երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	48 25
կէս օր	48 34

Կ. ՊՕԼԻՍ 2 սեպտ.	
Սօսիթէ մէհէրալի բաժինը Անգլ. վր.	7 5
« փոխանակութեան »	4 20
Կ. ՊՕԼԻՍ Պանքային »	5
Քրէտի թէնէրալ »	9,32
Քրէտի Օսթրո-Թիւրք	—
Երկաթուղեաց հին	ճր. 113 3/4
» նոր	87 1/2
Փոխ. 1863	» 332
» 1865	» 334
» 1869	» 282
» 1872	» 84 1/2
» 1873	» 265
Փոխ. միւլ	Փոխ. լիւր 5 25

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ	
2 ՍԵՊՏԵՄԲԵՐ	
Անգլ. Կոստ. դուրս	409,10
Նաւթի օրէնք »	87 8
Երկաթուղի Ռուս »	89 5
Գրքմի »	54,22
Հինգ ֆրանք »	—
Հինգ ֆրանք »	104 13
Յիշեմ »	127 20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՊՍԾՏՈՆԱԿԱՆ ԵՄԵՆՈՒՅՈՒՄՆ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

Աղգային կրօնական ժողովոյ նը-
կատելով որ Մայրաքաղաքիւ եկե-
ղեցեաց մէջ առ այժմ գտնուած
քահանայից թիւը բաւական է—գու-
ցէ և աւելի—, արժան կը դատէ ծա-
նուցանել առ դատ քահանայից և
առ թաղ խորհուրդս Մայրաքաղա-
քիս, որ այսուհետեւ նոր քահանայք
չպիտի ձեռնադրուին մինչև 'ի նոր
անօրէնութիւն, զոր ժամանակին
կ'աղգարարէ կրօնական ժողովո՝ առ
որ անկ է:

'ի Դիմաց կրօնական ժողովոյ
Աղգային վարչութեան

Ատենագալիւր	Ատենագալեա
Խորէն վրդապ.	Խորէն Աղբ.
Կիրոյեանց	Նար պէյ
23 Օգոստ. 1874	

Ամեն. Սրբազան Պատրիարք հայ-
րը Պէշիկլիշալի եկեղեցեաց տօնին առ-
թիւ շաբաթ օրը յիշեալ գիւղը դը-
նաց, և կիրակի առաւօտ Ս. Պատա-
րագ մատուցանելով և խորախօսե-
լով, տեղւոյն ժողովոյ ըրը հոգ եւս

րապէս մխիթարեց և գոհ ըրաւ:

Նոյն օրը Խորմեան սրբաղան ալ
Ղալաթիոյ եկեղեցին պատարագեց
ըստ փափաքանաց պանդուխտ ժո-
ղովրդոց և տեղւոյն բնակչաց:

Այս առթիւ Սրբապատգն պան-
դուխտ աղգայինք մեծածախ հաշ-
մը տուին Ն. Սրբազնութեան:

Երեսփոխանական ժողովոյ դիւանն
ուրբաթ օրը Քաղ. ժողովոյ հետ խոր-
հրդակցելով՝ յառաջիկայ նիստը
դռնփակ ընել որոշեր են:

Խալ ժողովին գումարման օրը չը
կրնալով որոշել, գալ շաբթու երկու
ժողովոց դիւանները վերստին պի-
տի խորհրդակցին:

Ուսումնական խորհրդոյ անդամ
ներէն երկուքը հրաժարած ըլլալով
Քաղ. ժողովը նոյա տեղ Եւստուֆեան
Տիգրան և Թէրքմեան Թադէոս է-
ֆէնիկներն ընտրեց:

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Իւստինեան էֆէնտի շինած Ա-
տենական կանոնադրութեան ծրագ-
րին վրայ անցեալները մեր տուած
համառօտ տեղեկութեան մէջ ըսած
էինք թէ այս տեսակ ծրագրի մը
քննութիւնն ընդհանուր ժողովոյ
մէջ կատարել անհնարին ըլլալով, ձե-
ռնհատ յանձնաժողով մը պէտք է
յանձնել, որպէս զի զայն ուշով
քննելէ ետեւ, հասուն դատողու-
թեամբ ընդհ. ժողովոյ ներկայացնէ
'ի հաստատութիւն:

Երեսփոխանական ժողովոյ ան-
դամներէն շատեր, որոց հետ տե-
սակցելու առթիւ ունեցանք, յիշեալ
ծրագրին ալ ընտանցուելէ ետեւ, մեր
կարծեաց իրաւունք կուտան, որով-
հետեւ ծրագրին այնպիսի տրամադ-
րութիւններ կը պարունակէ, որոց
ոմանք մեր Երեսփոխանական ժողո-
վոյ գոնէ ներկայ վիճակին չեն կըր-
նար յարմարիլ, ոմանք ալ ներկայ
Սահմանադրութեան կանոնական տը-
րամադրութեանց անհամաձայն են,
այնպէս որ առանց նոյն իսկ Սահմա-
նադրութիւնը վերաքննելու՝ չեն կըր-
նար ընդունուիլ:

Հետեւաբար ծրագրին քննութիւ-
նը Սահմանադրութեան վերաքննու-
թեան հետ անբաժանելի կապակ-
ցութիւն մ'ունենալով, ընդհ. ժողո-
վոյ գործն աւելի կը դժուարանայ
երբոր ծրագրին քննութիւնն իր վը-
րայ առնուի:

Շատեր ալ ծրագրին անսովոր
լեզուին ու ոման վրայ դիտողութիւն
կրնեն իբրեւ շատերու անհասկանա-
լիւ Այս դիտողութիւնն ալ անիրաւ
չթուիլ մեզ, որովհետեւ մեր երես-
փոխաններէն շատեր այդ կանոննե-
րն ուսմանելու համար նախ անոնց
լեզուն ու բառերը սովորելու պիտի
պարտաւորին, որ դիւրին գործ չէ,
մանաւանդ տարիքն առած անձանց
համար, որք ներկայ Սահմանադրու-
թեան պարզ լեզուն իսկ հաղիւ կը
հասկնան:

Այս ալ գլխաւոր պատճառ մ'է
ծրագրին յանձնաժողովոյ մը քննու-
թեանն ու սրբադրութեանը յանձ-
նելու, որպէս զի Երեսփոխանական
ժողովոյ քուէին ներկայացած ժա-
մանակ, անդամոց ամենն ալ հաս-
կընան, գիտակցութեամբ քուէ
տան, և ետքն ալ իրենց Երեսփո-
խանական պաշտօնն այդ կանոնին
համեմատ վարելու դժուարութիւն
չըպան:

Տնփխիսի Մշակ շաբաթաթերթը Ս. Էջմիածնայ նորակառույց ճեմարանին ուսմանը ծրագրին վրայ հետևեալ իրաւացի գիտողութիւնները կը հրատարակէ, որք անշուշտ վեհակաթողիկոսին ուշադրութեանն չեն կըրնար վրիպել:

Մեծ դարմանը է պատճառում ինձ այն որ յիշատակեալ ծրագիրը փոխանակ ստանալու յիշմիածնէ և կամ կարգաւոր նախ և յառաջ «Արարատ» ամսագրում, մեք ստանում ենք ի կոտանդնութեանը և կարգում ենք Պօլսոյ պարբերական թերթերի մէջ: Սորա պատճառն ինչ է: Այն է արդեօք որ նորակառույց ճեմարանի կառավարիչքն չեն կամեցել յայտնել ծրագիրը Ռուսիայի աղագայնոյ, որք զուցէ գտանեն նոյն ծրագրի մէջ անշարմար կէտեր և կամ այլ ինչ, յառաջ քան ճեմարանի բացուելն:

Սնտարակոյս յիշեալ ծրագիրն արժան է ծանր քննութեան. ստում եմ ծանրը, ըստ որում Էջմիածնական ճեմարանը լինելու է, որպէս յոյս ունին ունեցող մեր աղիկ համար իր աղիկը կամ ըսկըղնապատճառ նորոգութեւն ունեցող դարձ հայաստանի:

Առ ժամն ևս կարող չեմ չղարծուցանել ձեր աշխարհութիւնն այն կէտի վերայ, որ ինչպէս ասում է ծրագիրը, Էջմիածնական ճեմարանի նպատակն է «պատարասել զկուսակիցն եկեղեցականաց»: Եթէ յիշեալ ճեմարանի գլխաւոր նպատակն լինելու է պատարասել միայն կուսակիցն եկեղեցականաց, մեծ միտքովութիւն չէ մեզ համար: Այժմ մեր աղիկն ունի կարողութիւն ըստ մեծի մասին ուստել քահանայից և ոչ վարդապետաց: Քահանայն է որ ապրում է յիշողութիւն մէջ, քահանայն է որ կարող է իմանալ և հասու լինել ժողովրդի ցաւերին և պիտոյից, և ոչ վարդապետն, որ քաղաքների մէջ բնակուելու ևս իրաւունք չունի ըստ տէրութեան կանոնաց, այլ պարտական է մնալ իւր քիւնքի մէջ, ըստ իս, Էջմիածնական ճեմարանն օգտակար լի-

* Ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց ալ իրաւունք չունի:
Կը յուսանք որ Կ. Պօլսոյ կրօնական

ներու էր՝ եթէ նա իւրեան նպատակ դրած լինէր տալ իւր ուսանողաց ուսումն և գիտութիւն, և զինի ստանալոյ այդ ուսումն և գիտութիւնը՝ այնուհետեւ իւրաքանչիւր ուսանող կընտրէր իւր հումար այն տաղարէզը, որ իւրեան աւելի հաւանական էր, այն է վարդապետութիւն և կամ քահանայութիւն:

Երկրորդ կէտն որ արժանի է ըստ իս ուշադրութեան՝ այն է՝ ուսանելի աւարկայքն ընդ ամենն հաշուած են նուաք 23: Այդ ունիչ: Մեզ ցանկալի է զիտել թէ նորակառույց ճեմարանն, որ պիտի բանայ իւր դուռը սեպտեմբեր ամսուի Ս. Գլորիոյ տօնի օրում, որ տեղից գտաւ և կամ պիտի գտանէ այդ ամենայն գիտութեանց ուսուցչապետը (չեմ ասում վարդապետը) և ո՞ր են այն մատենքն՝ որոց վերայ պիտի աւանդուին նոքա նոյն ճեմարանին մէջ:

Տոյ Աստուած՝ որ որպէս թուղթն առանց դժուարութեան ընդունում է իւր վերայ ամենայն ծրագիր, նոյնպէս և Էջմիածնական ճեմարանն հետեւութեամբ գտանէ ուսուցչապետը և հրահանգներ . . . մատենքը:

3 Մոսկուա օգոստ. Ս. Գլորի

Մի անշախտհաս պատանի տաւում են եկեղեցին պահելու, աէր աէրը ցոյց տալով հարսը փեսային՝ հարցնում է. «որդի, աշխարհ է, հիւանդանալ կայ, աղքատութիւն կայ, կարօտութիւն կայ, և այդպիսի շատ անբարեբախտութիւններ կան, այն ժամանակ աէր ես կնոջդ. փեսայն պատասխանում է՝ «Տէրաէր, ես չեմ գիտեր, հայրս գիտէ»:

Պատասխանը ուրիշ կերպ կարող չէր լինել, որովհետեւ որդուն կին բերողը հայրն էր, որպէս շատ անգամ նորա համար կոշիկներ էր բերում բազարից:

Ժողովն իր ձեռնարկած եկեղեցական բարեկարգութեան ծրագրին մէջ այս կէտն ալ չմոռար:

Վ. ԻՆՎԵՍՏԻՆՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ
ՀԱՅ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՆ ԶՄԻՌՆՈՒՆՈՅ
ԹԻՒ ՏՈՄԱՍԱՍ 12000
ԳԻՆ ԻՐԱՆԻՆԻՆԻ 5 ՁԻՐԻՆ

Յերին շահող թիւն. այսինքն՝ Ա. Մի. ձ նոր տուն մը ի փոխելու ճատտէսի թիւ 55, լայնութիւն 16 եւ, երկարութիւն 80 կանդ ուն, 11 սենեկով, աղբիւրով ու պարտէզով արժէք 2000 Գաղղիական ոսկի. Բ. Պղտիկ Բուսիանէ մը չորս սենեկով ի փէշթըմաճըլար Պաշը: Գ. Խանութ մը ի Կիրիտ խան:

Վիճակահանութիւնն պիտի քաշուի անհրաժեշտաբար 1875 յունվար 11/13ին ի Հայ Հիւանդանոցն:

Ամեն տոմարի որ Հիւանդանոցի վարչութեան կնիքը չկրէր, անվաւեր է:

Մեծ տունը շահողը պիտի շնորհէ Հիւանդանոցին 120 Գաղղ. ոսկի Բուսիանէն շահողը 20
Խանութը 10

Այս վիճակահանութեան տոմարահերէն լրագրոյս գրասենեակն ալ գտնուելով, ուղարկ կրնայ լրագրոյս ցրուիչէն ստանալ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՈՐ ԵՇԽԵՐԷՆԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆՈՅ
Ի Գ. ԱՆԻՆԻՆԻ

Աշխարհի այլ եւ այլ մասերուն՝ մանաւանդ Եւրոպոյ մէջ վերջին տարիներս պատահած քաղաքական փոփոխութիւններն՝ հայերէն նոր աշխարհագրութեան մը պէտքն զգալի բերած էին:

Այս կարեւոր պէտքը լիովին լըրացած է սոյն ընտիր աշխատանքով թիւնը, միանգամայն թուրքոյ վրայ ալ ընդարձակաբար տեղեկութիւն տալով, որ ուրիշ աշխարհագրութեան մէջ կը պահուէր, եւ որպէս պէտք ալ զգալի էր:

Կը գտնուի Մէրճանը Պաղտատար աղայի զբաղումը եւ այլ գրականաւաց քով, Գին 2 1/2 ֆրանք:

ՀԱՏՈՒՄԻՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
Քաղաքը յԱրարացի պատմագրաց
'ի Ձեռն Տօքթոր Մորթմանայ
Արեւելագէտի
ՏԵՏԻՆ

Սմեն Հայ գրականաւաց քով կը գտնուի Գին մէկ քաղաքը արծաթ մէճիս:

ԾԱՆՈԹՈՒՄ

Հմուտ եւ փորձ հայկաբան մը շատ լավը երեք կէս օր պարապ ժամանակ ունենալով, պատրաստ է աղագայն յին վարժարանի մը մէջ հայերէնի, արամեանութեան եւ հոգեբանութեան դասախօսութիւն ընել:

Ու գողը լրագրոյս խմբագրէն կըրնայ տեղեկութիւն ստանալ:

ՀԱՐԻՐԻՆ 25 ՁԵՂԶ

ՄԻՆԱՍԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԸ
ՆՈՐԱՅՈՒՆՈՅ

ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՃՈՒՍԱՆ ԲԱՑՈՒՆԻԸ

Ս. Մ. Մինասեան եւ ընկերք պատիւ կը համարին ծանուցանել արդոյ հասարակութեան, որ իրենց Ամերիկեան վաճառատունը՝ վերստին կառուցուելով մօտեւ բացուեցաւ, եւ սոյն առթիւ իրենց բոլոր վաճառքները զեղչով պիտի ծախուին սկսեալ օգոստ. 8/20էն մինչեւ 18/30 սեպտեմբ. բեր. ուստի հասարակութիւնը յարգանք կը հրաւիրուի այս պատեհութեան օգուտ քաղելու:

Կարի գործիք՝ Սոպա եւ երկաթ խողովակներու գինեքն միայն հարաւրին 10 զեղչ պիտի ըլլայ:

Բոլոր միւս վաճառաց գինեքն հարաւրին 25 զեղչ պիտի ըլլայ:

Ամերիկեան վաճառատուն ճամբ գաբուսի Դաւաթիա 10

ՀԱՏՈՒՄԻՔ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲԱՂԱՆԻՔ ԵՒ ՎԱՃԱՐԱՆՈՅ ՊԱՏՄԱԴՐԱՅ

(Եւր. Կ. Բ. 1576)

ԻՊՆ ԽԱՆՈՒՆ ՀԱՏ. Գ. ԵՐ. 177:

Հիճրէթի 132 (Փրկչ. 750) թուին, Յոյն. Մալաթիա և Գալիլայա քաղաքներն ունին: Հիճրէթի 133 թուին Յունաց կոտորածին կայսրը Մալաթիա քաղաքը պաշարեց, Այն ժամանակ Միջագետաց Երկիրն անկարգ փիճակի մէջ լինաւ: Երկրին ուստիկանն էր Մուսա որդի Գաապի: Կոտորածին կայսրը Մալաթիայի պաշարումը սաստկացուց մինչև որ մէջի պահապան զօրքն հաշտութիւն խնդրեցին, և ինչ որ կրնային՝ հետեւին անուրով Միջագետք գնացին: Յոյն. Մալաթիա ստպատակեցէ ետեւ դէպ ի Գալիլայա պատմապարբ քաղեցին: Կոտորածին կայսրը Մալաթիին շրջակայներէն իր բանակը Գալիլայայի վրայ զրկեց՝ իր զօրավարներէն Գուշան Հայաղէթին հրամանատարութեամբ որպէս զի պաշարէ: Քաղաքին Հայերէն ամանք պարսպին մէջ խրամատ մը բացին, և Գուշան քաղաքը մեռաւ:

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Ե. ԵՐ. 181:

Հիճրէթի 133 (Փրկչ. 750 օգոստ. 1576 յուլիս 29), Յունաց կոտորածին կայսրը Մալաթիա և Բէմախ քաղաքներուն վրայ քաղեց, և վերջինը պաշարեց: Բնակիչները Մալաթիոյ բնակիչներէն օգնութիւն խնդրեցին, նոքա ալ 800 զօրական զրկեցին: Բայց Յոյն. այս զօրաց վրայ յարձակելով փախուցին, և Մալաթիա քաղաքը պաշարեցին: Այն միջոցին Միջագետաց կառավարիչ էր Գաապի

որդի Մուսա, որ Հարրան կը նստէր: Կոտորածին կայսրը պատգամ զրկեց Մալաթիոյ բնակչաց ըսելով. «Իմ պատերազմն ձեզի հետ չէ, այլ Տաճկաց: Ես ապահովութիւն կը չնորհեմ ձեր կենաց և ընչից. իսկ տաճկաց երկիրները թող աւերին և Մալաթիա ալ անձնատուր ըլլաւ ստիպուի»: Բայց Մալաթիոյ բնակիչք չմիացան Յունաց հետ: Այն ժամանակ Կոտորածին կայսրն իր մեքենայները քաղաքին դէմ զրկեց, և բնակիչներն ալ քաղաքը տալու հարկադրելով, Տաճկաց երկիրները քաշեցան՝ կրցածնին հետ տանելով և չկրցածնին ալ դուրերն ու ջրհորները լցնելով: Այսպէս Մալաթիոյ Յոյն բնակիչք Միջագետաց քաղաքները ցրուեցան: Յետոյ կայսրը Գալիլայայի վրայ քաղեց և գալիլայեցիներու մարդագետներն վրայ բանակելով, Գուշան Հայաղէթին զրկեց որ քաղաքը պաշարէ: Քաղաքին մէջ բնակեալ Հայ եղբարք պարսպին մէջ խրամատ մը բացին, և Գուշան ու իր զօրքերը քաղաքը մոռնելով, մէջի մարդիկը ջարդեցին, և կանայքն ալ գերի վարելով Յունաց կայսեր տարին:

Հոս կաւեցնեմ նաեւ երեք Յոյն պատմագրաց գրածը:

Թէօֆանէս Հատ. 1, Եր. 638 (Տղադ. Պօնն).

«Աշխարհի 6243 (Փրկչ. 752) թուին, Կոտորածին կայսրը Թէօֆոստոպոլիս և Մելեթինէ քաղաքներն առաւ և Հայերը դերի վարեց»:

Չօնարոս գիրք ԺԲ. ԳԼ. 6.

Կոտորածին կայսրը Թէօֆոստոպոլիս և Մելեթինէ քաղաքներն առաւ»:

Բէտրէնոս Հատ. Բ. Եր. 10 (Տղադ. Պօնն).

«Կոտորածին կայսրն իր 11 զօրավարներ Թէօֆոստոպոլիս և Մելեթինէ քաղաքներն առաւ»:

Հայ պատմագրութեան մէջ Կոտորածին կոպրնիմա կայսեր այս արշաւանաց վրայ բնաւ յիշատակութիւն չգտայ: Ուստի Յոյն և Արաբ մատենագրաց գրածները բաղդատելով կը հասկցուի որ Յունաց Թէօֆոստոպոլիս կոչած քաղաքն Արաբ պատմագրաց Գալիլայա կոչածն է, ինչպէս

որ առաջին տետրակին 22 զօր. ծանօթութեան մէջ (Եր. 10) ծանուցած եմ այս նոյնութիւնը: Բայց սքալած եմ ըսելով թէ այս օրուան թուրքերէն իրգրում և Հայերէն կարին կոչուած քաղաքն է: Այս սկալը ետքէն ստուգեցի յատուկ քննութեամբ: Հայ և Յոյն պատմագրաց թէօֆոստոպոլիս և Արաբ պատմագրաց ալ Գալիլայա կոչածը թուրքերէն Հատան—Գալէ և Հայ պատմագիրներէն ալ կարնոյ քաղաքը կոչուածն է: Արդ իրողութիւն (կարին) քաղաքն այն ժամանակը չկար. 1048 թուէն ետքը հիմնեցաւ, Արծն քաղաքին Սէլուդեանց ձեռքը քանդուեցն յետոյ:

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Ե. ԵՐ. 181:

ԻՊՆ ԽԱՆՈՒՆ ՀԱՏ. Գ. ԵՐ. 200:

Այս պատմագրաց Սէֆֆաճ՝ Ամիրապետ ըլլալուն պէս՝ իր Ապուստոֆէր Մանուէր եղբայրը Միջագետաց, Հայաստանի և Արաբական կողմէն ստիկան անուանեց: Ապուստոֆէր Միջագետաց մէջ նստելով, Ուսէյիսի որդի Ենգիտը Հայաստանի, և Սուլի որդի Մուհամմէտն Արաբական կողմէն ստիկան անուանեց:

Այս Ոստիկաններն Հիճրէթի 184 (Փրկչ. 751—752) թուին կը շարունակէին իրենց պաշտօնավարութիւնը:

ԻՊՆ ԻԻԼ ԱԹԻՐ ՀԱՏ. Ե. ԵՐ. 197

ԻՊՆ ԽԱՆՈՒՆ ՀԱՏ. Գ. ԵՐ. 203

Հիճրէթի 139 (Փրկչ. 756—757 թուին, Մանուէր ամիրապետն և Կոտորածին կայսրը գերեաց փոխանակութիւն ըրին: Ամիրապետը Գալիլայայի գերիները դնեց, քաղաքը վերաշինեց և այն դերներն հոն զրկելով քաղաքը վերստին չէնցուց: Միջագետքէն ալ զօրք զրկեց որ հոն նստին եւ քաղաքը պաշտպանեն:

